Դատական Գործ N: ԵԴ/45735/02/21

Երևան քաղաքի դատարան

Նոր քաղաքացիական գործ	
Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	08-10-2021
Հայցվոր/դիմող	
Անուն	Նազիկ
Ազգանուն	Ռազգոևա
Հայրանուն	Շարոյի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Սեռ	Իգական
Այլ	ք. Երևան Լվովյան փողոց, 5 րդ շենք բն. 48 ք. Երևան Մաշտոցի 14/60
Ներկայացուցիչ	
Անուն	Արմեն
Ազգանուն	Հակոբյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Սեռ	Արական
Հեռախոս	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Պատասխանող	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	ըստ օրենքի ժառանգության ընդունման փաստը հաստատելու պահանջի մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	8.7.5
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Այլ նշումներ:	
Պահանջն անհատականացնող տվյալ:	
Ստացման եղանակ:	Առձեռն
Պետական տուրք	
Անդորրագիրը/Միջնորդությունը դատարան ներկայացնելու ամսաթիվ:	08-10-2021
Ներկայացվել է:	Անդորրա(գրեր)գիր
Վճարված պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	2000
Պետ. տուրքի վճարման ամսաթիվը:	15-06-2021

Պետ. տուրքի վճարման անդորրագրի համարը:	1222947133
Այլ նշումներ:	

Մակագրել (Նախագահի կողմից)

Գործի համար:	
Ամսաթիվ:	08-10-2021

Նախագահող դատավոր

Դատարանի անվանում:	Երևան քաղաքի դատարան
Դատավորի անուն:	Սիմա Ալբերտի Իսկանդարյան
Այլ նշումներ:	

Հայցադիմումը վերադարձվել է

Ամսաթիվ:	21-10-2021

Որոշման հիմքը

Հոդված	127,199,200,362
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
Որոշման բովանդակություն:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ

Դատական ակտ (վճիռ, որոշում):	ԵԴ/45735/02/21 ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 21.10.2021թ. ք. Երևան Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Սիմա Իսկանդարյանի, ծանոթանալով Նազիկ Շարոյի Ռազգոևայի դիմումին՝ ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, Պ Ա Ր Զ Ե Ց Նազիկ Շարոյի Ռազգոևայի ներկայացուցիչը 08.10.2021 թվականին դիմում է ներկայացրել Դատարան՝ ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին: Դիմումը 08.10.2021 թվականին մակագրվել է դատավոր Ս. Իսկանդարյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 13.10.2021 թվականին: Ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ դիմումը ենթակա է վերադարձման՝ հետևյալ պատճառաբանությամբ. գ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ առաջին ատյանի դատարանին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-ին մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են դիմողի հաշվառման

	(գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում, բացառությամբ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերի, որոնք քննվում են անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում: Սույն պարագայում հայցվորը ներկայացրել է ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջ և դիմումի ներածական մասում որպես դիմողի հաշվառման վայրի հասցե նշել է «ՌԴ, Վլադիմիրի մարզ, Վլադիմիր քաղաք, 3-րդ Կոլցևայա փողոց, թիվ 29 տուն», որպիսի պայմաններում Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: գ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ), հայցվոր իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը: Դատարանն արձանագրում է, որ Նազիկ Շարոյի Ռազգոևայի ներկայացուցիչ Արմեն Հակոբյանի կողմից ներկայացված հայցադիմումում բացակայում են վերջինիս անձնագրային տվյալները: գ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումին կից բացակայում է Նազիկ Շարոյի Ռազգոևայի ներկայացուցիչ Արմեն Հակոբյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Վերոգրյալ պատճառաբանություններից ելնելով՝ դատարանը գտնում է, որ առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դիմումը վերադարձնելու հիմքերը, հետևաբար և դիմումը ենթակա է վերադարձման: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 127-րդ, 199-րդ, 200-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանն Ո Ր Ո Շ Ե Ց 1. Նազիկ Շարոյի Ռազգոևայի դիմումը՝ ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, և դրան կից փաստաթղթերը վերադարձնել դիմողի ներկայացուցչին: 2. Սույն որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան դիմողի կողմից այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	21-10-2021
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Այլ նշումներ:	
Գործը, Որոշումը հանձնվել է գրասենյակ	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	25-11-2021
Էջերի քանակը:	*
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	

Որոշումն ուղարկվել է կողմերին	
Որոշումն ուղարկվել է կողմերին:	21-10-2021
Ելքի համար:	Ե-225671/21
Այլ նշումներ:	
Հայցադիմումը կրկին ներկայացվել է	
Ներկայացման ամսաթիվ:	25-11-2021
Մակագրել (Նախագահի կողմից)	
Գործի համար:	
Ամսաթիվ:	25-11-2021
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևան քաղաքի դատարան
Դատավորի անուն:	Սարգիս Երիցյան
Այլ նշումներ:	
Պետական տուրք	
Անդորրագիրը/Միջնորդությունը դատարան ներկայացնելու ամսաթիվ:	25-11-2021
Ներկայացվել է:	Անդորրա(գրեր)գիր
Վճարված պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	2000
Պետ. տուրքի վճարման ամսաթիվը:	15-06-2021
Պետ. տուրքի վճարման անդորրագրի համարը:	1222947133
Այլ նշումներ:	
Ընդունվել է վարույթ	
Որոշման ամսաթիվ:	10-12-2021
Որոշման բովանդակություն:	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/45735/02/21 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ 10.12.2021թ. ք. Երևան Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Երիցյանս, քննարկելով ըստ դիմումի Նազիկ Շարոյի Ռազգոևայի (այսուհետ՝ նաև Դիմող)՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, քաղաքացիական գործով դիմումը վարույթ ընդունելու հարցը՝ ՊԱՐԶԵՑԻ Դիմող Նազիկ Շարոյի Ռազգոևան, դիմելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Դատարան), հայտնել է, որ քաղաքացի Գոհարիկ Բայլոզի Ռազգոևան հանդիսացել է Դիմողի ամուսնու՝ Բախշի Բայլոզի Ռազգոևի հարազատ քույրը: Ժառանգատու Գոհարիկ Բայլոզի Ռազգոևան մահացել է 2010

	թվականի հուլիսի 05-ին, որից հետո բացվել է ըստ օրենքի ժառանգություն: Ժառանգական զանգվածի մեջ մտել է ժառանգության բացման օրը՝ ք. Երևան, Լվովյան փողոց, 5-րդ շենք, բնակարան 48 հասցեում գտնվող անշարժ գույքի ¼-րդ բաժնի նկատմամբ Գոհարիկ Բայլոզի Ռազգոևայի սեփականության իրավունքը: Ժառանգատուի եղբայրը՝ Բախշի Բայլոզի Ռազգոևը, ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքում, թեև ժառանգությունն ընդունելու մասին հայտարարությամբ չի դիմել նոտարական գրասենյակ և չի ձևակերպել դրա ընդունումը, սակայն նույն ժամկետի ընթացքում փաստացի տիրապետել ու կառավարել է ժառանգական գույքը, հետևաբար օրենքով սահմանված ժամկետում և կարգով ընդունել է ըստ օրենքի իրեն հասանելի ժառանգությունը: Հայտնել է նաև, որ Բախշի Բայլոզի Ռազգոևի մահից հետո բացվել է ըստ օրենքի ժառանգություն, որն ընդունվել է ժառանգատուի կնոջ՝ սույն գործով դիմող Նազիկ Շարոյի Ռազգոևայի կողմից: Սակայն Ժառանգատու Բախշի Բայլոզի Ռազգոևի ժառանգական զանգվածից դուրս է մնացել նրա կողմից քրոջ՝ Գոհարիկ Բայլոզի Ռազգոևայի ընդունած ժառանգական գույքը և այդ մասով ժառանգության վկայագիր չի տրվել Դիմողին: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ, 238-րդ 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ խնդրել է հաստատել քաղաքացի Բախշի Բայլոզի Ռազգոևի /մահացած՝ 13.07.2017 թվականին/ կողմից իր քրոջ՝ Գոհարիկ Բայլոզի Ռազգոևայի /մահացած՝ 05.07.2010 թվականին/ ըստ օրենքի ժառանգության ընդունման փաստը: Հայցադիմումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում մուտքագրվել է 08.10.2021 թվականին և կազմվել թիվ ԵԴ/45735/02/21 քաղաքացիական գործը: Դատարանի /դատավոր՝ Ս. Իսկանդարյան/ 21.10.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Հայցադիմումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում կրկին ներկայացվել է 25.11.2021 թվականին և մակագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Երիցյանին: Քաղաքացիական գործը դատական կազմին հանձնվել է 01.12.2021 թվականին: Ուսումնասիրելով ներկայացված դիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ ՈՐՈՇԵՑԻ 1. Նազիկ Շարոյի Ռազգոևայի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, դիմումն ընդունել վարույթ և քաղաքացիական գործի քննությունը նշանակել 25.01.2022 թվականին, ժամը 15:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակ 2 նստավայրի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հալաբյան 41ա, դատական նիստերի դահլիճ թիվ 9): Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից: ԴԱՏԱՎՈՐ Ս. ԵՐԻՑՅԱՆ
Այլ նշումներ:	
Պարզեցված վարույթ	
Ամսաթիվ:	
Պարզեցված վարույթ:	Ոչ
Որոշումը:	
Նշանակվել է դատաքննություն	

Դատաքննության ամսաթիվ:	25-01-2022
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-12-2021
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	9
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Անավարտ գործեր

Հաշվետու ժամանակահատված:	2021 թվական
Տեսակը:	Անավարտ գործեր, որոնք գտնվում են քննության փուլում
Այլ նշումներ:	

Դատական ակտի հրապարակման օր

Ամսաթիվ:	16-02-2022
Այլ նշումներ:	

Հայցի/հակընդդեմ հայցի լուծումը

Հայցի լուծման ամսաթիվ:	16-02-2022
Հայցի լուծումը:	Բավարարվել է

Հոդված

Հոդված	5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ և 362-րդ
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Դատական ակտ

Դատական ակտ (վճիռ, որոշում):	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/45735/02/21 ՎՃԻՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ 16.02.2022թ. ք. Երևան Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝ նախագահությամբ՝ դատավոր քարտուղարությամբ՝ Ս. Երիցյանի Ա. Հովսեփյանի մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝ Արմեն Հակոբյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2094), դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործը, ըստ դիմումի Նազիկ Շարոյի Ռազգոևայի (ՌԴ քաղաքացու անձնագիր՝ 71 4786891, տրված՝ 03.06.2011 թվականին, ՖՄՃՎԲ 33003-ի կողմից, հասցե՝ ք.Երևան, Լվովյան փ., 5 շ., բն. 48)՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը
Նազիկ Շարոյի Ռազգոևայի ներկայացուցիչը դիմում է ներկայացել դատարան՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին:
Դիմումն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում մուտքագրվել է 08.10.2021 թվականին և կազմվել թիվ ԵԴ/45735/02/21 քաղաքացիական գործը:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս.Իսկանդարյան) 21.10.2021 թվականի որոշմամբ դիմումը վերադարձվել է:
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում դիմումը կրկին մուտքագրվել է 25.11.2021 թվականին:
Քաղաքացիական գործը դատավորի աշխատակազմին հանձնվել է 01.12.2021 թվականին:
Դատարանի 10.12.2021 թվականի որոշմամբ դիմումը ընդունվել է վարույթ և քաղաքացիական գործի քննությունը նշանակվել է 25.01.2022 թվականին, ժամը՝ 15:00-ին:
Դատարանը 25.01.2022 թվականին ավարտել է գործի քննությունը և նշանակել վճռի հրապարակման օր 16.02.2022 թվականին:

2. Դիմումի հիմքերը, դիմողի փաստարկները և պահանջը
Դիմելով դատարան՝ Նազիկ Շարոյի Ռազգոևայի ներկայացուցիչը հայտնել է, որ քաղաքացի Դոհարիկ Բայլոզի Ռազգոևան հանդիսացել է դիմող Նազիկ Ռազգոևայի ամուսնու՝ Բախշի Բայլոզի Ռազգոևի հարազատ քույրը: Ժառանգատու Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևան մահացել է 2010 թվականի հուլիսի 05-ին, որից հետո բացվել է ըստ օրենքի ժառանգություն: Ժառանգական զանգվածի մեջ մտել է ժառանգության բացման օրը ք.Երևան, Լվովյան փողոց, 5-րդ շենք, բնակարան 48 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4-րդ բաժնի նկատմամբ Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևայի սեփականության իրավունքը: Ժառանգատուի եղբայրը՝ Բախշի Բայլոզի Ռազգոևը, ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքում, թեև ժառանգությունն ընդունելու մասին հայտարարությամբ չի դիմել նոտարական գրասենյակ և չի ձևակերպել դրա ընդունումը, սակայն նույն ժամկետի ընթացքում փաստացի տիրապետել ու կառավարել է ժառանգական գույքը, հետևաբար օրենքով սահմանված ժամկետում և կարգով ընդունել է ըստ օրենքի իրեն հասանելի ժառանգությունը:
Բախշի Բայլոզի Ռազգոևի մահվանից հետո բացվել է ըստ օրենքի ժառանգություն, որն ընդունվել է ժառանգատուի կնոջ՝ սույն գործով դիմող Նազիկ Շարոյի Ռազգոևայի կողմից: Սակայն ժառանգատու Բախշի Ռազգոևի ժառանգական զանգվածից դուրս է մնացել նրա կողմից քրոջ՝ Գոհարիկկ Ռազգոևայի ընդունած ժառանգական գույքը և այդ մասով ժառանգության վկայագիր չի տրվել Դիմողին:
Ուստի, Բախշի Բայլոզի Ռազգոևի կողմից իր քրոջ՝ Գոհարիկկ Ռազգոևային պատկանող ժառանգական գույքի՝ ք. Երևան, Լվովյան փողոց, 5-րդ շենք, բնակարան 48 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4-րդ բաժնի՝ ըստ օրենքի ժառանգության ընդունման փաստի դատական կարգով հաստատման դեպքում, նշված գույքը կմտնի Դիմողի ամուսնու՝ Բախշի Ռազգոևի ժառանգության զանգվածի մեջ և դրա հիման վրա կտրվի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր:
Քանի որ Դիմողը չի կարող այլ եղանակով հաստատել մահացած ամուսնու կողմից մահացած քրոջ ժառանգությունը ընդունած լինելու փաստը, ուստի հարկադրված դիմել են դատարան՝ նշված իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար:
Գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը
Գոհարիկկ Բայլոզի Ռազգոհևան մահացել է 2010 թվականի հուլիսի 05-ին:
Քաղաքացի Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևան և Բախշի Բայլոզի Ռազգոևը հանդիսանում են հարազատ քույր և եղբայր:
Գոհարիկկ Ռազգոևայի ժառանգության բացման օրը ժառանգատուի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկված է եղել՝ ք.Երևան, Ավովյան փողոց, 5-րդ շենք, բնակարան 48 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 1/4-րդ բաժնի նկատմամբ նրա սեփականության իրավունքը:
Գոհարիկկ Ռազգոևան ամուսնացած չէ և չունի առաջին հերթի ժառանգներ:
Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Նոր Նորք 1/8 համատիրության կողմից 2021 թվականի մայիսի 27-ին տրված տեղեկանքի համաձայն՝ «հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևան՝ մահացած 05.07.2010թ. մինչ մահը բնակվել է ք. Երևան Լվովյան փողոցի 5 շենքի,

	բնակարան 48 հասցեում: Նրա մահվան օրվանից մինչ իր մահը՝ 13.07.2017թ.՝ բնակվել է քաղաքացի Բախշի Բայլոզի Ռազգոևը, այդ թվում փաստացի տիրապետել և կառավարել է նշված հասցեի անշարժ գույքը, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու համար, կատարել է պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները: Բախշի Բայլոզի Ռազգոևը նոտարական կարգով չի ձևակերպել Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևայի ժառանգության ընդունումը: Բախշի Բայլոզի Ռազգոևը մահացել է 2017 թվականի հուլիսի 13-ին: 2019 թվականի մարտի 20-ին Երևան նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որով ժառանգատու Բախշի Բայլոզի Ռազգոևի ամբողջ ժառանգական գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանագ է համարվել ժառանգատուի կինը՝ Նազիկ Շարոյի Ռազգոևան: Ժառանգական գույքը բաղկացած է եղել ՀՀ, Երևանի քաղաքի Նոր Նորք համայնքի, Ն Նորքի 1 մ/շ 81/82, 48 բնակարան (փոխված հասցե՝ Լվովյան փողոց 5-րդ շենք) բնակարանի 1/4-րդ բաժնից: Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Նորք 1/8 համատիրության կողմից 2021թ մայիսի 27-ին տրված թիվ 95 տեղեկանքի համաձայն՝ ք. Երևան, Լվովյան փողոց, 5-րդ շենք, բնակարան 48 հասցեում 2010 թվականի հուլիսի 5-ից մինչ օրս, բացի Նազիկ Շարոյի Ռազգոևայից և Էրիկ Բախշիի Ռազգոևից, այլ անձինք չեն բնակվում: 10.2019թ հոկտեմբերի 4-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04102019-01-0273 վկայականի «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» հատվածում մասնավորապես նշված է՝ «Հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևայի 1/4 ժառանգական բաժնի վերաբերյալ ժառանգության իրավունքի վկայագիր չի ներկայացվել»: Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ, 1215-րդ, 1217-րդ, 1225-րդ, 1226-րդ հոդվածները, ՀՀ վճռաբեկ դատարանի նախկիում կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտել է, որ սույն գործի փաստերից երևում է, որ Դիմողի ամուսինը՝ Բախշի Բայլոզի Ռազգոևը հանդիսանում է ժառանգատու Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևայի հարազատ եղբայրը և երկրորդ հերթի ժառանգը: Քանի որ ժառանգատուն ամուսնացած չէ և չունի զավակներ, ուստի ժառանգության իրավունք է ձեռք բերել երկրորդի հերթի ժառանգը: Այլ խոսքով՝ օրենքի իմաստով Բախշի Բայլոզի Ռազգոևի մոտ ծագել է իր հանգուցյալ քրոջը սեփականության իրավունքով պատկանող ժառանգական բաժինը ընդունելու իրավունք: Համաձայն ներկայացված տեղեկանքների և փաստաթղթերի՝ Բախշի Ռազգոևը քրոջ մահից հետո շարունակել է տիրապետել և կառավարել ժառանգության զանգվածի մեջ մտնող ք.Երևան, Լվովյան փողոց 5 շենք բնակարան 48-ի 1/4-րդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը՝ միջոցներ ձեռնարկելով գույքը պահպանելու համար, ինչպես նաև իր հաշվին կատարելով գույքի պահպանման ծախսերը: Այսինքն,առկա է եղել ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, որի համար վերջինս դրսևորել է ակտիվ գործողություններ՝ այն պահպանելու և երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելու համար: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ Բախշի Ռազգոևը ընդունել է քրոջ՝ Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևային՝ ք.Երևան, Ավովյան փողոց, 5-րդ շենք, բն. 48 հասցեում գտնվող՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքով պատկանող 1/4-րդ մասով բաժինը, սակայն չի ձևակերպել նոտարական կարգով և չի ստացել ժառանգության իրավունքի վկայագիր: Բախշի Ռազգոևի մահից հետո բացվել է ըստ օրենքի ժառանգություն: Դիմող Նազիկ Ռազգոևան, լինելով ժառանգատու Բախշի Ռազգոևի կինը և առաջին հերթի ժառանգը, նոտարական կարգով ընդունել է ամուսնու ժառանգությունը: Սակայն քրոջ ժառանգական բաժնի ընդունումը չձևակերպելու արդյունքում, այն դուրս է մնացել Բախշի Ռազգոևի ժառանգական զանգվածից, ուստի Դիմողն, իր հերթին, ոչ լրիվ է ընդունել հասանելիք ժառանգությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով, բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի, ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը: Սույն գործով հայցվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստը կարող է հաստատվել միայն դատական կարգով, քանի որ Դիմողը չի կարող այլ եղանակով հաստատել մահացած ամուսնու կողմից մահացած քրոջ ժառանգությունը ընդունած լինելու փաստը:

Ուստի, ելնելով վերոգրյալ փաստական և իրավական հիմքերից ու հիմնավորումներից, միաժամանակ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ, 238-րդ, 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով, դատարանին խնդրել է հաստատել քաղաքացի Բախշի Բայլոզի Ռազգոևի (մահացած 13.07.2017թ.) կողմից իր քրոջ՝ Գոհարիկկ Բայլոզի Ռազգոևայի, մահացած՝ 05.07.2010 թվականին, ըստ օրենքի ժառանգության ընդունման փաստը:

3. Սույն գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը
1) Երևան քաղաքի ՔԿԱԳ գործակալության ԵՀՍ տ/բ-ի կողմից 06.07.2010 թվականին տրված թիվ ԱԲ031515 մահվան վկայականի համաձայն՝ Գոհարիկկ Ռազգոևան մահացել է 05.07.2010 թվականին:
2) ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից 05.03.2019 թվականին տրված թիվ 27/01-Ռ50 տեղեկանքի համաձայն՝ նախկին շրջգործկոմի 12.08.1994թ. թիվ 32/331 որոշմամբ Նոր Նորքի 1-ին մ/շ 81/82 (նոր հասցե Լվովյան 5) շենքի թիվ 48 բնակարանը սեփականաշնորհվել է քաղ. Բախշի Բայլոզի Ռազգոնի անվամբ, ընտանիքի 4 անձով:
Սակայն շրջգործկոմի մեջ Բաշխի Ռազգոևի ազգանվան մեռ առկա է անճշտություն՝ ըստ մահվան վկայականի ճշտված տվյալ է.
1. Ռազգոև Բախշի Բայլոզի վարձակալ ծնվ.1951թ.
2. Ռազգոևա Գոհարիկկ Բայլոզի վարձ. քույր ծնվ.1946թ.
3. Ռազգոև Էրիկ Բախշիի վարձ. տղա ծնվ.1977թ.
4. Մամոյան Նազիկ Շարոյի վարձ.կին ծնվ.1956թ.:
3) <<Երևան>> նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից հաստատված 23.03.2019 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Բախշի Բայլոզի Ռազգոևի ամբողջ գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են համարվել՝ ժառանգատուի կինը՝ Նազիկ Շարոյի Ռազգոևան:
4) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.10.2019 թվականի թիվ 04102019-01-0273 վկայականի համաձայն՝ Երևան, Նոր-Նորք, Լվովյան փողոց, 5 շենք, 48 բնակարանի նկատմամբ գրանցված իրավունքի սուբյեկտ են՝ Նազիկ Շարոյի Ռազգոևան (1/2), Էրիկ Բախշիի Ռազգոևը (1/4), գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն, հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևայի ¼ ժառանգական բաժնի վերաբերյալ ժառանգության իրավունքի վկայագիր չի ներայացվել:
5) Նոր Նորք վարչական շրջանի <<Նորք 1/8>> համատիրության կողմից 27.05.2021 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևան՝ մահացած՝ 05.07.2010թ., մինչև մահը բնակվել է ք. Երևան, Լվովյան փողոցի 5 շենքի, բն.48 հասցեում: Նրա մահվան օրվանից նշված հասցեում մինչև մահը բնակվել է քաղաքացի Բախշի Բայլոզի Ռազգոևը, 13.07.2017 թ., փաստացի տիրապետել է կառավարել է նշված հասցեի անշարժ գույքը, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու, իր հաշվին կատարել է գույքի պահպանելու ծախսերը, կատարել է պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները:
6) Նոր Նորք վարչական շրջանի <<Նորք 1/8>> համատիրության կողմից 16.12.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևան՝ մահացած՝ 05.07.2010թ., մինչև մահը բնակվել է ք. Երևան, Լվովյան փողոցի 5 շենքի, բն.48 հասցեում: Նրա մահվան օրվանից նշված հասցեում մինչ օրս բնակվում են քաղաքացիներ Նազիկ Շարոյի Ռազգոևան, Էրիկ Բախշիի Ռազգոևը, փաստացի տիրապետում և կառավարել են նշված հասցեի անշարժ գույքը, միջոցներ են ձեռնարկում գույքը պահպանելու, իրեն հաշվին կատարում են գույքը պահպանելու ծախսերը, կատարում եմ պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները:
4. Դատաքննությամբ հաստատված փաստերը, դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը
Դատարանը, լսելով դիմողի ներկայացուցչին, ուսումնասիրելով գործի փաստական հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, եկավ հետևյալ եզրահանգման.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը.

	1) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը. (...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝ (...) 5) ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին. (...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով, բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի, ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող դատարանի վճռում պետք է շարադրվի հաստատված փաստը: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ դատարանի վճիռը հիմք է համապատասխան մարմինների կողմից այդ փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ ծագած իրավունքները ձևակերպելու համար: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար նախատեսում է որոշակի նախապայման, որպիսին համարվում է այլ կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր ստանալու հնարավորության բացակայությունը կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ հատուկ վարույթի գործերն այն գործերն են, որոնք ուղղված են անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելուն (տե՛ս, ըստ Անահիտ Ոսկանյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին թիվ 3-332 (Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 2-ի որոշումը): Միաժամանակ, Դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստը դատարանը հաստատում է, եթե անձը չի կարող այլ կարգով ստանալ ժառանգության իրավունքի վկայագիր: Որպես այդպիսի պատճառ կարող է լինել նաև ժառանգության ընդունման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածով նախատեսված նախատեսված վեցամսյա ժամկետում նոտարին դիմում չներկայացնելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան անցնում է այլ անձանց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո: Իսկ նույն օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1189-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է: Եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:
Նույն օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:
Այն դեպքում, երբ ժառանգը դիմումը նոտարին չի հանձնում անձամբ, ապա նման դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը:
Ժառանգության ընդունումը ներկայացուցչի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հատուկ նախատեսված է այն ընդունելու լիազորությունը:
Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝
1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.
2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.
3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:
Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:
Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տե՛ս, Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը):
ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության բարձրացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (ի թիվս այլ ակտերի՝ տե՛ս Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը):
Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ)

	քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը): ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին և 6-րդ հոդվածների համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցի տեսակներն են՝ 1) վկայի ցուցմունքը. 2) գրավոր ապացույցները. 3) իրեղեն ապացույցները. 4) լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները. 5) փորձագետի եզրակացությունը. 6) մասնագետի բացատրությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ և 67-րդ հոդվածների իրավական վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակցող անձինք պարտավոր են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված ապացույցներով ապացուցել իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Վերջին հաշվով յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխում է դատարանը՝ պարզելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում, դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (տես, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը): Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված ապացույցների թույլատրելիությանը, գտել է, որ դատարանը պետք է վերոնշյալ հոդվածը կիրառելիս ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը (տեԲս, Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի և այլոց թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը): Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ դատարանն ապացույցների վերաբերելիության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ վերաբերելի են այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են քննվող գործի

	լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար: Այդ մասին է վկայում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը, որի համաձայն՝ նախագահողը ղեկավարում է դատական նիստը՝ մերժելով այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնել է, որ դատարանն ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը լուծելիս պետք է պահպանի վերոնշյալ կանոնները, որից հետո որոշի փաստի հաստատված լինելու կամ չլինելու հարցը: Դատաքննությամբ հաստատվել է, որ Երևան քաղաքի ՔԿԱԳ գործակալության ԵՀՍ տ/բ-ի կողմից 06.07.2010 թվականին տրված թիվ ԱԲ031515 մահվան վկայականի համաձայն՝ Գոհարիկկ Ռազգոևան մահացել է 05.07.2010 թվականին: ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից 05.03.2019 թվականին տրված թիվ 27/01-Ռ50 տեղեկանքի համաձայն՝ նախկին շրջգործկոմի 12.08.1994թ. թիվ 32/331 որոշմամբ Նոր Նորքի 1-ին մ/շ 81/82 (նոր հասցե Լվովյան 5) շենքի թիվ 48 բնակարանը սեփականաշնորհվել է քաղ. Բախշի Բայլոզի Ռազգոնի անվամբ, ընտանիքի 4 անձով: Սակայն շրջգործկոմի մեջ Բաշխի Ռազգոևի ազգանվան մեռ առկա է անճշտություն՝ ըստ մահվան վկայականի ճշտված տվյալ է. 5. Ռազգոև Բախշի Բայլոզի վարձակալ ծնվ.1951թ. 6. Ռազգոևա Գոհարիկկ Բայլոզի վարձ. քույր ծնվ.1946թ. 7. Ռազգոև Էրիկ Բախշիի վարձ. տղա ծնվ.1977թ. 8. Մամոյան Նազիկ Շարոյի վարձ.կին ծնվ.1956թ.: <<Երևան>> նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից հաստատված 23.03.2019 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Բախշի Բայլոզի Ռազգոևի ամբողջ գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են համարվել՝ ժառանգատուի կինը՝ Նազիկ Շարոյի Ռազգոևան: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.10.2019 թվականի թիվ 04102019-01-0273 վկայականի համաձայն՝ Երևան, Նոր-Նորք, Լվովյան փողոց, 5 շենք, 48 բնակարանի նկատմամբ գրանցված իրավունքի սուբյեկտ են՝ Նազիկ Շարոյի Ռազգոևան (1/2), Էրիկ Բախշիի Ռազգոևը (1/4), գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն, հանգուցյալ Գոհարիկկ Ռազգոևայի ¼ ժառանգական բաժնի վերաբերյալ ժառանգության իրավունքի վկայագիր չի ներայացվել: Նոր Նորք վարչական շրջանի <<Նորք 1/8>> համատիրության կողմից 27.05.2021 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Գոհարիկ Ռազգոևան՝ մահացած՝ 05.07.2010թ., մինչև մահը բնակվել է ք. Երևան, Լվովյան փողոցի 5 շենքի, բն.48 հասցեում: Նրա մահվան օրվանից նշված հասցեում մինչև մահը բնակվել է քաղաքացի Բախշի Բայլոզի Ռազգոևը, 13.07.2017 թ., փաստացի տիրապետել է կառավարել է նշված հասցեի անշարժ գույքը, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու, իր հաշվին կատարել է գույքի պահպանելու ծասխերը, կատարել է պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները: Նոր Նորք վարչական շրջանի <<Նորք 1/8>> համատիրության կողմից 16.12.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Գոհարիկ Ռազգոևան՝ մահացած՝ 05.07.2010թ., մինչև մահը բնակվել է ք. Երևան, Լվովյան փողոցի 5 շենքի, բն.48 հասցեում: Նրա մահվան օրվանից նշված հասցեում մինչ օրս բնակվում են քաղաքացիներ Նազիկ Շարոյի Ռազգոևան, Էրիկ Բախշիի Ռազգոևը, փաստացի տիրապետում և կառավարել են նշված հասցեի անշարժ գույքը, միջոցներ են ձեռնարկում գույքը պահպանելու, իրենց հաշվին կատարում են գույքի պահպանելու ծախսերը, կատարում եմ պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները: Վերոնշյալ փաստերի հիման վրա Դատարանը փաստում է, որ դիմող Նազիկ Շարոյի Ռազգոևայի ամուսինը՝ Բախշի Բայլոզի Ռազգոևը, չի դիմել նոտարին Գոհարիկ Ռազգոևայի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու համար, սակայն վերջինս ձեռնարկել է ակտիվ գործողություններ ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը համար, մասնավորապես՝ Նոր Նորք վարչական շրջանի <<Նորք 1/8>> համատիրության կողմից 27.05.2021 թվականին տրված տեղեկանքից բխում է, որ Գոհարիկ Ռազգոևայի մահվան օրվանից Բախշի Բայլոզի Ռազգոևը փաստացի տիրապետել է և կառավարել է ք. Երևան, Լվովյան փողոցի 5 շենքի, բն. 48 հասցեի անշարժ գույքը, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը, կատարել է պարտադիր նորմերի և կոմունալ վճարումները: Դատարանը փաստում է, որ Գոհարիկ Ռազգոևայի հնարավոր այլ

ժառանգների շրջանակ չի պարզվել:
Վերը նշված պատճառաբանությամբ և քաղաքացիական գործի փաստերի լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ դիմումը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:
Հատուկ վարույթներով, ինչպես նաև սույն օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:
Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:
Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքի գումարից:
Սույն գործով, նկատի ունենալով, որ դիմումը բավարարվում է, իսկ դիմողն էլ նախապես վճարել է պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:
Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Նազիկ Շարոյի Ռազգոևայի դիմումը՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, բավարարել.
հաստատել Բախշի Բայլոզի Ռազգոևի (մահացած՝ 13.07.2017թ.) կողմից իր քրոջ՝ Գոհարիկ Բայլոզի Ռազգոևայի (մահացած՝ 05.07.2010թ.) ըստ օրենքի ժառանգության ընդունման իրավաբանական նշանալություն ունեցող փաստը:
2.Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ԵՐԻՑՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	16-02-2022
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Այլ նշումներ:	
Դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ	
Ամսաթիվ:	18-03-2022
Այլ նշումներ:	
Գործը, Որոշումը հանձնվել է գրասենյակ	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	10-11-2022
Էջերի քանակը:	68
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	